ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱԿԱՑԻԿԼԻԿ ՇԵՄԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սույն մեթոդաբանությունը նկարագրում է կապիտալի հակացիկլիկ շեմի (այսուհետ նաև՝ կապիտալի հակացիկլիկ բուֆեր (ԿՀԲ)) սահմանման գործընթացը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում (այսուհետ՝ ՀՀ ԿԲ):

Կապիտալի հակացիկլիկ բուֆերի սահմանման հիմքում դրվում են միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվող սկզբունքները և մեթոդաբանությունը, այդ թվում՝ վաղ ահազանգման տարատեսակ քանակական ցուցանիշները, դրանց համախմբման արդյունքում ստացված ամփոփ ցուցանիշների վերլուծությունը, ֆինանսական հատվածի զարգացումների վերաբերյալ փորձագիտական գնահատականները (ուղղորդված հայեցողականություն/guided discretion): Քանակական մոտեցումների և փորձագիտական գնահատականների միջոցով հնարավոր է դառնում գնահատել վարկային ցիկլերի[2] (credit cycles) և դրանց փոփոխություններով պայմանավորված համակարգային ռիսկերի զարգացումները:

1. Կապիտալի հակացիկլիկ բուֆերի նպատակը

ԿՀԲ-ը մակրոպրուդենցիալ քաղաքականության գործիքներից մեկն է, որը թիրախավորում է վարկերի ավելցուկային աճը[3] (excessive credit growth)՝ մեղմելով ֆինանսական համակարգի կայունության վրա վերջինիս բացասական հետևանքները: Մակրոպրուդենցիալ քաղաքականություն իրականացնող մարմինը վարկերի ավելցուկային աճի հետևանքով համակարգային ռիսկերի հնարավոր կուտակումը զսպելու նպատակով, վարկային ցիկլի վերելքի փուլում բարձրացնում է ԿՀԲ-ի պահանջը՝ ստեղծելով լրացուցիչ բուֆեր: Վարկային ցիկլի անկման փուլում այս բուֆերի պահանջը նվազեցվում է՝ դրանով իսկ մեղմելով ֆինանսական համակարգի մասնակիցների կողմից վարկավորման ծավալների մեծածավալ կրճատման անհրաժեշտությունը (դելևերեջինգ) և վերջինիս անցանկալի հետևանքները ֆինանսական կայունության և տնտեսական աճի վրա:

Այսպիսով, ԿՀԲ-ի հիմնական նպատակը ֆինանսատնտեսական շոկերին ֆինանսական համակարգի դիմակայելու ունակության բարձրացումն ու տնտեսությանը վարկավորման տեսքով տրամադրվող ֆինանսական միջոցների հարթ ընթացքի ապահովումն է:

---

[2] Տես՝ "Guidance for national authorities operating the countercyclical capital buffer" (BCBS); www.bis.org/publ/bcbs187.pdf , ինչպես նաև , "Basel III: A global regulatory framework for more resilient banks and banking systems"; www.bis.org/publ/bcbs189_dec2010.pdf

[3] Տես՝.RECOMMENDATION OF THE EUROPEAN SYSTEMIC RISK BOARD, on intermediate objectives and instruments of macro-prudential policy; www.esrb.europa.eu/pub/pdf/recommendations/2013/ESRB_2013_1.en.pdf

2. ԿՀԲ վերաբերյալ որոշումների կայացման ՀՀ ԿԲ մոտեցումը

ԿՀԲ-ի սահմանման ընդհանուր մոտեցումը առաջարկվել է Բանկերի վերահսկողության Բազելյան կոմիտեի կողմից (ԲՎԲԿ): Համաձայն այս մոտեցման ԿՀԲ-ի վերաբերյալ որոշումների կայացման համար նախնական (ելակետային) գործոն է հանդիսանում տնտեսությանը տրամադրված վարկեր/ՀՆԱ հարաբերակցության իր երկարաժամկետ տրենդից շեղման չափը (ճեղք)[4]:

Այնուամենայնիվ, Բազելյան կոմիտեի կողմից խորհուրդ է տրվում ԿՀԲ-ի վերաբերյալ որոշումներ կայացնելիս չհիմնվել բացառապես վարկեր/ՀՆԱ ցուցանիշի մեխանիկորեն կիրառման վրա, քանի որ այն վարկային ցիկլի զարգացումների վերաբերյալ հաճախ սխալ եզրահանգումների կարող է բերել: Մասնավորապես սխալ եզրահանգումների պատճառ կարող են հանդիսանալ կարճ ժամանակային շարքերի օգտագործումը, ինչպես նաև զարգացող տնտեսություններին բնորոշ վարկավորման տարբերվող օրինաչափությունները և այլն: Բացի այդ, վարկեր/ՀՆԱ ճեղքը կարելի է դիտարկել միայն որպես վարկերի ավելցուկային աճի գնահատման նախնական ուղենիշ, որը սակայն բավարար չէ որոշելու վարկային ցիկլի զարգացումները, մասնավորապես՝ վերջինիս փուլերի միջև առկա շրջման կետերը (վերելքի փուլ, վայրեջքի փուլ): Վերոնշյալով պայմանավորված՝ Բազելյան կոմիտեի կողմից առաջարկվում է ի լրումն վարկեր/ՀՆԱ ճեղքի ԿՀԲ-ի վերաբերյալ որոշումներ կայացնելիս առաջնորդվել հայեցողականության սկզբունքով (discretion):


ՀՀ ԿԲ-ը նույնպես կիրառում է հայեցողականություն և ԿՀԲ-ի սահմանման վերաբերյալ որոշումները կայացնելիս վարկեր/ՀՆԱ ճեղքից ածանցված գնահատականներին զուգահեռ կիրառում է նաև վարկերի ավելցուկային աճը և համակարգային ռիսկերի կուտակումը բնութագրող վաղ ահազանգման այլ ցուցանիշներ, վերլուծում է այդ ցուցանիշների, ինչպես նաև դրանց համախմբման արդյունքում ստացված ամփոփ տվյալների փոփոխությունները, կատարում է փորձագիտական դատողություններ: Մասնավորապես, վաղ ահազանգման ցուցանիշների թվին են դասվում վարկային շուկայի զարգացումները բնութագրող ցուցանիշները (վարկերի ծավալների փոփոխություն, վարկավորման աճի տեմպեր, տրենդերի վերլուծություն, վարկավորման պայմաններ և այլն), վարկային շուկայի զարգացումների հետ սերտորեն կապված անշարժ գույքի գները և հիպոթեկային վարկավորման միտումները, արտաքին անհավասարակշռությունը բնութագրող ցուցանիշները և այլն:

ՀՀ ԿԲ-ում ԿՀԲ-ի սահմանման վերաբերյալ որոշումների կայացումը (դրույքաչափի որոշում, բարձրացում, նվազեցում, անփոփոխ թողնելը) իրականացվում է համաձայն Գծանկար 1-ում նկարագրված հաջորդական քայլերի: Ըստ նկարագրված գործընթացի, սկզբնական փուլում (գծանկարում նշված է կարմիր գույնով) նախ անհրաժեշտ է որոշել, թե արդյո՞ք ԿՀԲ-ի փաստացի մակարդակը համապատասխանում է տնտեսության

[4] Տես՝ "Guidance for national authorities operating the countercyclical capital buffer" (BCBS); www.bis.org/publ/bcbs187.pdf

ընթացիկ զարգացումներին: Այսինքն՝ ՀՀ ԿԲ-ը պետք է որոշում կայացնի ԿՀԲ-ի բարձրացման, նվազեցման կամ անփոփոխ թողնելու վերաբերյալ: Այս փուլում քանակական ցուցանիշների միջոցով (վարկ/ՀՆԱ ճեղք և այլն ցուցանիշներ) գնահատվում է վարկային շուկայի համընդհանուր զարգացումների արդյունքում համակարգային ռիսկերի առաջացման (կուտակման) հնարավորությունը: Այնուհետև, այս գնահատականները և դրանցից ածանցված որոշումները կարող են ճշգրտվել հաշվի առնելով փորձագիտական դատողությունները և ԿԲ այլ գործիքների հնարավոր ազդեցությունները[5]:

Գծանկար 1: ԿՀԲ-ի սահմանման վերաբերյալ որոշումների կայացման ՀՀ ԿԲ մոտեցումը



Այն դեպքում, երբ ՀՀ ԿԲ-ը եզրահանգում է, որ ԿՀԲ-ի դրույքաչափի փոփոխման անհրաժեշտություն չկա, ապա դրանով գործընթացը ավարտվում է (գծանկարում նշված է կարմիր գույնով): Այն դեպքում, երբ որոշվում է վերանայել ԿՀԲ-ի դրույքաչափը բարձրացման կամ նվազեցման ուղղությամբ, ապա գործընթացը շարունակվում է և սկսվում են դրույքաչափի փոփոխության վերաբերյալ քննարկումները (գծանկարում նշված է կապույտ գույնով): Մասնավորապես՝ ավելի մանրամասն գնահատվում են վարկերի

[5] Որպես օրինակ կարող է հանդիսանալ վարկ/գրավ կամ պարտքի սպասարկում/եկամուտ հարաբերակցությունների առավելագույն սահմանաչափերի փոփոխության հնարավոր ազդեցությունները, որոնք կարող են մասամբ մեղմել ռիսկերի կուտակումը:

ավելցուկային աճը նախանշող տարբեր քանակական ցուցանիշների աճի տեմպերը, վերջիններիս իրենց տրենդերից շեղումների չափը և շեղման տևողությունը, ծավալային փոփոխությունները, և այլն:

Նախքան ԿՀԲ-ի դրույքաչափի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը վերը թվարկված ամբողջ մուտքային տեղեկատվությունը նորից համադրվում է փորձագիտական դատողությունների հետ և սահմանվում է դրույքաչափ (գծապատկերում նշված է դեղին գույնով):

Ամփոփելով նշենք, որ մակրոպրուդենցիալ գործիքների, մասնավորապես՝ ԿՀԲ-ի վերաբերյալ որոշումներ կայացնելիս ՀՀ ԿԲ-ն առաջնորդվում է ուղղորդված հայեցողականության սկզբունքով: Ուղղորդված հայեցողականության սկզբունքի կիրառումը պայմանավորված է նրանով, որ համակարգային ռիսկերի գնահատումը բարդ գործընթաց է և բացառապես քանակական մեթոդների մեխանիկական կիրառմամբ արված եզրահանգումները կարող են բավարար (ճիշտ) չլինել: Հետևաբար, ԿՀԲ-ի վերաբերյալ ՀՀ ԿԲ որոշումների կայացման գործընթացը հիմնվում է ոչ միայն քանակական մեթոդներով ստացված գնահատականների, այլ նաև փորձագիտական դատողությունների վրա: